

«ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Հոդվածը պետք է կառուցված լինի հետևյալ ձևաչափով՝

հոդվածի վերնագիր, համառոտագիր, հիմնաբառեր, հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան և կոչում, որոնք անհրաժեշտ է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն: Նշվում է նաև հեղինակի էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում ներկայացվում են գիտական այն արդյունքները, որոնք առավել առաջնահերթ են տվյալ ոլորտում և երբևէ հրատարակված չեն եղել:

Աշխատանքում պարտադիր են հետևյալ բաժինները.

- համառոտագիր (ABSTRACT),
- հիմնաբառեր (KEYWORD),
- ներածություն (INTRODUCTION),
- գրականության ակնարկ (LITERATURE REVIEW),
- հետազոտության մեթոդաբանություն (RESEARCH METHODOLOGY),
- վերլուծություն (FINDINGS, ANALYSES),
- եզրակացություններ (CONCLUSIONS),
- գրականություն (REFERENCES):

Նշված բաժինները վերնագրերով առանձնացնելը պարտադիր է: Անհրաժեշտության դեպքում հոդվածի բովանդակությունը կարող է բաժանվել առանձին բաժինների՝ իրենց ենթավերնագրերով:

1. **Համառոտագիր:** Համառոտագրում եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունն ու ստացված արդյունքները (մինչև 100-200 բառ):

2. **Հիմնաբառեր** (ոչ ավելի, քան 7 բառ):

3. **Ներածություն:** Ակնարկ է կատարվում թեմայի արդիականությանը, նպատակին և վերջին տարիների զարգացումներին (մինչև 100-200 բառ):

4. **Գրականության ակնարկ:** Կատարվում է հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն: Ներկայացվում են այն հիմնական ուղղությունները, որոնք զարգացրել են այլ հետազոտողներ՝ տվյալ թեմայի ուսումնասիրության շրջանակում (300-1200 բառ):

5. **Հետազոտության մեթոդաբանություն:** Ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունն ու գործիքակազմը՝ հիմնավորելով վերջիններիս ընտրության անհրաժեշտությունը (200-700 բառ):

6. **Վերլուծություն:** Բացահայտվում են հետազոտության օբյեկտի օրինաչափությունները, միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները և այլն, որոնք ձևավորում են հետազոտության հիմնական արդյունքները (1000-2500 բառ):

7. **Եզրակացություններ:** Հետազոտության հիմնական արդյունքների համառոտ նկարագրություն (մինչև 200-500 բառ):

8. **Գրականության ցանկ:** Ներկայացվում է հաջորդաբար՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ յուրաքանչյուրում պահպանելով այբբենական կարգը: Միայն առցանց հղումներ պարունակող աղբյուրները տրվում են ամենավերջում:

Հոդվածը կարող է ներկայացվել 2000-6000 բառի շրջանակում:

ՀՈԴՎԱԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Տառատեսակը՝ GHEA Grapat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, էջի չափը՝ A4, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ, հղումները՝ տողատակում, ըստ հետևյալ հաջորդականության՝ աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (պարբերականի դեպքում՝ նաև համար) և էջ: Միայն առցանց հղումներ պարունակող աղբյուրները տրվում են ամբողջությամբ (link): Հոդվածում ներկայացված գծապատկերները և աղյուսակները պետք է ունենան խմբագրական միջամտության հնարավորություն:

ՀՈԴՎԱԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ներկայացված հոդվածները ուղարկվելու են անանուն («կույր») գրախոսման՝ երկու անկախ փորձագետների կողմից, և միայն դրական կարծիքի արժանանալուց հետո են դրանք ենթակա տպագրության: Գիտական և տեխնիկական պահանջները չբավարարելու դեպքում հոդվածը չի տպագրվում, և անկախ փորձագետների կարծիքը ուղարկվում է հեղինակին (հեղինակային խմբին):

Անանուն գրախոսության համակարգով գրախոսվող հոդվածները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- գիտականություն,
- օրիգինալություն,
- արդիականություն,
- որակ:

Գիտականություն՝ հրապարակման մեջ գիտական քննարկման տարրերի բավարար առկայություն:

Օրիգինալություն՝ աշխատանքում ներկայացված արդյունքները չպետք է հայտնի լինեն և նախկինում հրապարակված:

Արդիականություն՝ հոդվածում նկարագրված գաղափարների, մեթոդների կարևորություն, օգտակարություն և կիրառելիություն:

Որակ՝ հոդվածի գիտական, տեխնիկական և/կամ մեթոդական ներդաշնակություն, արդյունքների և հղումների ճշգրտություն և ստուգելիություն, ըստ որոնց հնարավոր կլինի ճշմարիտ ապացույցներ գտնել:

Ներկայացված հոդվածների համապատասխանությունը վերոնշյալ պահանջներին կորոշի գրախոսող անկախ փորձագետը: Ըստ այդմ՝ խմբագրական խորհուրդը կընդունի ստորև նշված որոշումներից մեկը.

- տպագրվում է (To publish),
- տպագրվում է նշված դիտողությունները վերացնելուց հետո (X To publish after correcting mistakes),
- չի տպագրվում (Not to publish):